ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 171-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը և ֆինանսական բաժնի պետի կողմից ներկայացված 2021 թվականի բյուջեի հակիրճ նախագիծը՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Մասիս քաղաքային համայնքի 2021 թվականի համախմբված բյուջեն՝

ա/ եկամուտների գծով՝ 792877.3 հազար դրամ:

բ/ ծախսերի գծով՝ 792877.3 հազար դրամ:

2. Հաստատել Մասիս քաղաքային համայնքի 2021 թվականի բյուջեի վարչական մասը՝

ա/ եկամուտների գծով՝ 757149.3 հազար դրամ:

բ/ ծախսերի գծով՝ 757149.3 հազար դրամ:

3.Հաստատել Մասիս քաղաքային համայնքի 2021 թվականի բյուջեի ֆոնդային մասը՝

ա/ մուտքերի գծով՝ 35728.0 հազար դրամ:

բ/ ծախսերի գծով՝ 35728.0 հազար դրամ:

4. Հաստատել հատված 1-ով նախատեսված 2021 թվականի համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հավելված 1-ի:

5. Հաստատել հատված 2-ով նախատեսված 2021 թվականի համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման համաձայն հավելված 2-ի:

6. Հաստատել հատված 3-ով նախատեսված 2021 թվականի համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 3-ի:

7. Հաստատել հատված 6-ով նախատեսված 2021 թվականի համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 4-ի:

8. Թույլատրել համայնքի ղեկավարին կատարել փոփոխություն տարվա ընթացքում հաստատված բյուջեի ծախսային ծրագրերի հոդվածների միջև միչև 15 % -ի չափով:

9. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ